«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
1 օգոստոսի 2002 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հուլիսի 2002 թվականի N 1101-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ (ՄԱՐԶԵՐԻ ՀԱՄԱՐ) ԳՏՆՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ (ԱՆՕԳՏԱԳՈՐԾԵԼԻ) ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Վերնագիրը փոփ. 13.10.05 N 1656-Ն)

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում և վարչականսահմաններից դուրս (մարզերի համար) գտնվող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար հատկացված հողերի և գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերի (անօգտագործելի) կադաստրային գնահատման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

(1-ին կետը փոփ. 13.10.05 N 1656-Ն)

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահին՝ երկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով ապահովել նշված հողերի կադաստրային գնահատման վերահաշվարկի կատարումը և դրա տրամադրումը Հայաստանի Հանրապետության մարզպետներին:

3. Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում և վարչական սահմաններից դուրս(մարզերի համար) գտնվող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար հատկացված հողերը յուրաքանչյուր հողակադաստրային շրջանի համար գնահատվում են առանձին՝ բացառությամբՀայաստանի Հանրապետության կառավարության 1994 թվականի սեպտեմբերի 28-ի «ՀայաստանիՀանրապետության բնակավայրերի (քաղաքների, քաղաքատիպ ավանների, գյուղերի) հողերի կադաստրային զուտ եկամտի և հողի կադաստրային արժեքի ժամանակավոր չափերի հաստատման մասին» N 462 որոշման հավելվածում ընդգրկված համայնքների:

(3-րդ կետը փոփ. 13.10.05 N 1656-Ն)

3.1. Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում և վարչական սահմաններիցդուրս (մարզերի համար) գտնվող, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 1994 թվականի սեպտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի (քաղաքների, քաղաքատիպ ավանների, գյուղերի) հողերի կադաստրային զուտ եկամտի և հողի կադաստրային արժեքի ժամանակավոր չափերի հաստատման մասին» N 462 որոշման հավելվածում ընդգրկված համայնքների, հողերից գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերը (անօգտագործելի) յուրաքանչյուր հողագնահատման շրջանների համար գնահատվում են առանձին, Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության և անօգտագործելի հողերի պետական հողային կադաստրի տվյալները հաստատելու մասին» N 237 որոշմամբ 1997 թվականի համար սահմանված գործակցով հաշվարկված, գյուղատնտեսական նշանակության հողերից՝ V (հինգերորդ) խմբի արոտների հողատարածքներով կշռված զուտ եկամուտներով և կադաստրային գներով՝ համաձայն N 2 հավելվածի:

(3.1 կետը լրաց. 13.10.05 N 1656-Ն)

3.2. Որոշման N 2 հավելվածով նախատեսված գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերի (անօգտագործելի) զուտ եկամուտները և կադաստրային գները հիմք են հանդիսանում, համապատասխանաբար, հողի հարկի հաշվարկման, ինչպես նաև օտարելու (այդ թվում՝ ուղղակի կամ աճուրդով վաճառելու), վարձակալության իրավունքով տրամադրելու դեպքերում՝ վաճառքի կամ մեկնարկային գների, վարձավճարի որոշման համար:

(3.2 կետը լրաց. 13.10.05 N 1656-Ն)

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական նշանակության և անօգտագործելի հողերի պետական հողային կադաստրի տվյալները հաստատելու մասին» N 237 որոշման 1-ին կետի «բ» ենթակետը և 2002 թվականի ապրիլի 29-ի «Հայաստանի

Հանրապետության համայնքների վարչական սահմաններում գտնվող հասարակական արտադրական նշանակության օբյեկտների համար հատկացված և անօգտագործելի հողերի կադաստրային գնահատման կարգը հաստատելու մասին» N 474 որոշումը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ Ա. Մարգարյան

2002 թ. հուլիսի 31
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2002 թվականի
հուլիսի 25-ի N 1101-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ (ՄԱՐԶԵՐԻ ՀԱՄԱՐ) ԳՏՆՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ (ԱՆՕԳՏԱԳՈՐԾԵԼԻ) ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

(Վերնագիրը փոփ. 13.10.05 N 1656-Ն)

1. Հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար հատկացված հողերը գնահատվում են տվյալ համայնքի տնամերձ հողամասերի, անջրդի վարելահողերի, խոտհարքների և արոտների հաշվեկշռային միջին արժեքների չափերով՝ հետևյալ բանաձևով՝

$$Ա = \frac{(Ա1 \times S1 + Ա2 \times S2 + Ա3 \times S3 + Ա4 \times S4)}{(S1 + S2 + S3 + S4)} \times 25,$$

որտեղ՝

Ա-ն տվյալ հողակադաստրային շրջանի մեկ հեկտարի կադաստրային գինն է,

Ա1-ը տնամերձ հողամասերի մեկ հեկտարի զուտ եկամուտն է (տվյալ հողակադաստրային շրջանում ընդգրկված համայնքների համար),

S1-ը տվյալ հողակադաստրային շրջանում ընդգրկված համայնքների տնամերձ հողամասերի ընդհանուր մակերեսն է (հա),

Ա2-ը անջրդի վարելահողերի մեկ հեկտարի միջին զուտ եկամուտն է (տվյալ հողակադաստրային շրջանում ընդգրկված համայնքների համար),

S2-ը տվյալ հողակադաստրային շրջանում ընդգրկված համայնքների անջրդի վարելահողերի ընդհանուր մակերեսն է (հա),

Ա3-ը գյուղամերձ խոտհարքների մեկ հեկտարի միջին զուտ եկամուտն է (տվյալ հողակադաստրային շրջանում ընդգրկված համայնքների համար),

S3-ը տվյալ հողակադաստրային շրջանում ընդգրկված համայնքների գյուղամերձ խոտհարքների ընդհանուր մակերեսն է (հա),

Ա4-ը գյուղամերձ արոտների մեկ հեկտարի միջին զուտ եկամուտն է (տվյալ հողակադաստրային շրջանում ընդգրկված համայնքների համար),

S4-ը տվյալ հողակադաստրային շրջանում ընդգրկված համայնքների գյուղամերձ արոտների ընդհանուր մակերեսն է (հա):

2. Գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերի (անօգտագործելի) զուտ եկամուտների նկադաստրային գների հաշվարկման համար հիմք են ընդունվում յուրաքանչյուր հողագնահատման շրջանների համար գյուղատնտեսական նշանակության հողերից՝ V (հինգերորդ) խմբի արոտների հողատարածքներով կշռված միջին զուտ եկամուտներն ու կադաստրային գները՝ համաձայն N 2 հավելվածի:

(Հավելվածը փոփ., լրաց. 13.10.05 N 1656-Ն)

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2002 թվականի
հուլիսի 25-ի N 1101-Ն որոշման ՍՍ

Հողագնահատման շրջանը և ընդգրկված մարզերը	Գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերի (անօգտագործելի)՝		Հողագնահատման շրջանը և ընդգրկված մարզերը	Գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքերի (անօգտագործելի)՝	
	զուտ եկամուտը (դրամ/հեկտար)	կադաստրային գինը (դրամ/հա)		զուտ եկամուտը (դրամ/հեկտար)	կադաստրային գինը (դրամ/հա)
Մերձարաքսյան (ՀՀ Արարատի և Արմավիրի մարզեր)	2300	57500.0	Սևան (ՀՀ Գեղարքունիքի եւԿոտայքի մարզեր)	4300	107500.0
Ուրց-Կոտայք-Շամիրամ (ՀՀ Արարատի, Արմավիրի, Կոտայքի եւԱրագածոտնի մարզեր)	2700	67500.0	Ներքին Դեբեդ-Աղստև(ՀՀ Տավուշի, Գեղարքունիքի և Լոռու մարզեր)	5300	132500.0
Կոտայք-Թալին (ՀՀ Արագածոտնի, Շիրակի եւԿոտայքի մարզեր)	3200	80000.0	Վերին Դեբեդ-Աղստև(ՀՀ Տավուշի, Գեղարքունիքի և Լոռու մարզեր)	6000	150000.0
Վեդի-Ներքին Արփա (ՀՀ Վայոց ձորի և	2500	62500.0	Փամբակ-Ներքին Զորագետ (ՀՀ Լոռու մարզ)	5900	147500.0

Արարատի մարզեր)					
Ուրց-Վայոց ձոր (ՀՀ Վայոց ձորի և Արարատի մարզեր)	2700	67500.0	Վերին Ձորագետ (ՀՀ Լոռու մարզ)	6100	152500.0
Ախուրյան-Սպիտակ (ՀՀ Շիրակի և Լոռու մարզեր)	3600	90000.0	Սյունիք (ՀՀ Սյունիքի մարզ)	2800	70000.0
Աշոցք (ՀՀ Շիրակի մարզ)	4500	112500.0	Որոտան (ՀՀ Սյունիքի մարզ)	5000	125000.0
Ապարան-Հրազդան (ՀՀ Արագածոտնի, Շիրակի նԿոտայքի մարզեր)	5100	127500.0			

(Հավելվածը լրաց. 13.10.05 N 1656-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար Մ. Թոփուզյան